Ամէնք ժողվան ի միասին,
Անկան ի յոտք Նըվիրակին.
Ասեն. « Գրթա՛ պարոնտիրին՝
Վան Աստուծոյ և մեր խաթրին.
Չի է մանուկ տիս հասակին,
Նստեալ էմրով փատիշահին.
Զըլնի թէ տայ տեղ սատանին,
Հակառակի հետ մեր ազգին.
Ունիմք մեք շատ չար թշնամի,
Զերթայ 'նդ նոսա միաբանի » :
Երբ Նըվիրակըն զայն լըսեց
Սակաւ մի իւր սիրտըն վախեց.
Ցօժարեցաւ կոչել ընդ նա,
Սիրով սրտիւ հաշտիլ ընդ նա :
Իբրեւ լուաւ ազգըս Հայոց
Թէ Նըվիրակն է հաշտելոց,
Որ տեղ որ կայր հանած վարած՝
Շուտ մէկմէկի արին իմաց.
Եկեալ ասեն Նըվիրակին.
Թէ, « Այդ ի՞նչ բան քո արածնին.
Հաշտի՞լ կամիս ընդ մեր թշնամին՝
Ընդ բազմամեղ չարագործին.
Եւ թէ հաշտիս դու ընդ Նըմին՝
Մենք կ'ուրանամք դէմիածին.
Զքեզ կու ձգեմք վրայ երեսի,
Կ'առնեմք Նըման Նիկոլայի :
Մեք ժողովեցաք բազում դեկան
Ցոլով ղուռուշ և շատ դրամ,
Պիտոր բերեմք ընդա յատեան,
Առնումք ըզկարգն, ձըգեմք կո-
[խան » :
Եւ այլ բազում չար խօսեցան,
Իբր ըզՀրեայս, թէ ի խաչ հան.
Ապա թէ ոչ՝ չես բարեկամ
Ազգիս Հայոց՝ որ ի Լեհ կան :
Իսկ Նըվիրակն երկչոտ հոգին՝
Հաւանեցաւ խօսից նոցին.
Հրաման արար տունս ամենին,
Թէ մի՛ ոք ընդ նա խօսեսցին :
Ամենեքեան ազգ և ազին
Լըւան խօսից Նըվիրակին.
Բանադրանացն ալ վախեցին,
Բնաւ այլ մօտըն չըգնացին :
Լըսեց՝ թէ շատ են դատախազք,
Ունին շատ գանձ և դասասածք(1).
Վասն այն եղեւ տարակուսածած,
Չի ազգն յիւրմէն եղան դարձած.
Այլ և տեսաւ որ չիմնաց մին,
Ի յօտարաց և յիւր տոհմին.
Հառչեց ի լաց ողորմագին,
Եւ վայ կարդաց իւրոյ անձին.
Ասաց. Ամբոխն է թշնամի
Եւ Նըվիրակն կողմն նոցին.
Ազգականաց եմ ատելի,
Քահանայք տան վըճիռ ինձի :
Ունէր փեսայ մի նա բարի,
Սահակն որդի Յակոբչայի,
Խիստ երկիւղած եւ անուանի
Շինող վանացըն Սուրբ Խաչի.
Նա խըղճացաւ պարոնտիրին,
Խոստացաւ դրամ Նըվիրակին,
Հինգ հարիւր ղուռուշ էմիածնին.
Խաչ և սկիհ սուրբ սեղանին :
Տէր Խաչատուրըն չիմըռեց,
Աղաչանացըն չի լըսեց.
ԸզՍէֆէրն ալ ի դատ քաշեց,
Զայլ բարեխօսըն Նըզովեց :
Յետոյ սթարոստան քաղաքին
Եւ մեծ տիկինըն Պըլէցքին,
Ղրկեցին խնդիրք Նվիրակին,
Թէ, թող զյանցանս իբր ճահիլին :
Նա չիլըսեց ամենեւին,
Զըկատարեց զխնդիր նոցին.
Ինատ արաւ ի յիւր մըտին.
Այլ և ոմանք Նըմա հէլ (2) տային :

1. Թուի՝ Դատասաց, իբր avocat : — 2. Թր. Զար խրատ, նենգութիւն :